անընդհատ կ'ողողէ մտքերն ու հոգիները համայն մարդկութեան:

Ի՞նչ է, անհասանելի գաղտնիքը այս Մեծ եւ Սուրբ խորհուրդին, որ տարին, պահ մը, խոկումներու կը մղէ եւ կը ստիպէ անխտրաբար փոքրին, մեծին, մէկդի դնել ամենօրեայ պատմուճանն դատապարտելի բարքերուն, եւ նոր բացուող բուրումնաւէտ շուշանի մը պէս, լուսաւորուած մարմնացեալին շնորհալի բարութեամբ, կը սփռեն լաւագոյնն ու ամէնաբարին մարդկային զգացումներուն:

Այսպէս ահա, կը շարունակուի փրկչի ծնունդով հաստատուած առաքելութիւնը, մարդը՝ մարդով բարձրացնելու կատարեալին:

Ի՞նչ է կառոյցը քրիստոնէական հին օրերու աւանդութեանց, որ անհատնում, դարեր շարունակ, Խաղաղութիւն եւ Սէր կը ծորէ: Զէ՞ որ Ամանորը գալիք տարուան յատկանիշն է եւ իբրեւ այդ ակնկալուած նոր աղբիւրը բարութեանց:

Ի՞նչ է զօրութիւնը հեռաւոր անցեալի այդ օրհնեալ օրուան, որ միշտ նորազգեստ, յամառօրէն կու գայ բախելու, դռները մարդոց սրտերուն, ներմուծելու հոն Աւետումը փրկութեան:

Անտարակոյս, երկհազարամեայ խորհուրդ մըն է Աստուածային, որ կը շրջի անժամանակ քաօսին մէջ համատարած, իբրեւ ծառայ, իբրեւ հովիւ, իբրեւ փարոս, իբրեւ փրկիչ փառոյն ամբողջ:

Ուխտ մըն է նոր հին օրերէն, որ կը կնքուի ամէն տարի ամանորին, եւ Ինքը Աստուած, դարձեալ կու գայ հանդիպելու իր ստեղծած արարածին:

Պահանջատէրն է ան՝ տրուած առատ պարգեւներուն:

Ամանորը, պա՞հն է կարծես հաշուեյարդարի, յանկերգ դարձած, կրկնումովը անցեալ տասնըերկու ամիսներու եւ զարկը մղիչ գալիք յաջորդ երկվեցեակին:

Ահա թէ ինչո՞ւ դարերէ ի վեր, Սուրբ Ծննդեան տարեդարձին, պահանջքէ ծնած պարտադրական ժամադրութիւն մ'է դարձած, որ մարդը զգաստ վերադառնայ իր սկզբի աստուածանման պատկերին:

Ահա այսպէս, անհասանելի խորհուրդի գեղեցկութեամբ հոգեգրաւ, մարդիքը բոլոր, հաւատացեալ թէ անհաւատ, գաղտնի ոյժէ մը մղուած, խրախճանքի սեղանները աղօթքներով համեմուած, կը բարձրաձայնեն՝

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ, Զեզի, Մեզի Մեծ Աւետիս:

ԶԱՐԵՀ ԹՕՓԱԼԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներուն առիթով, շնորհաւորանքի գիրեր եւ հեռագրեր առաքուեցան Հոգեւոր ու Կառավարական պետերուն եւ Առաջնորդներուն, որոնց շնորհաւորագիրերը ստացած է Պատրիարք Սրբազան Հայրը.-

- Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսէն.
- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսէն.
- Կ. Պոլսոյ Հայոց Ամեն. Պատրիարք Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեանէն.
- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Ամեն. Տ. Ալէքսէյ Բ. Սրբազան Պատրիարքէն.
- Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Տիար Մարթին Եսայեանի.
- Թեմական Առաջնորդներէն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներէն:

digitised by A.R.A.R.@

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 1880 Սուրբ Ծնունդ, 2007 թ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ
Երուսաղեմ, Իսրայել

Սիրելի Պատրիարք Սրբազան,

«Քրիստոս Ծնաւ և Յայտնեցաւ» Աստվածհայտնության ավետիսով՝ Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր սրտաբուխ շնորհավորանքներն ենք հղում Ձերդ Ամենապատվությանը, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ուխտապահ միաբանությանը, եկեղեցական-վարչական մարմինների հարգարժան անդամներին ու հավատաւոր Մեր բոլոր զավակներին:

Սուրբ Ծննդյան սքանչելի Խորհրդով վերստին նոր կյանքի արշալույս է բացվել համայն մարդկության համար: Բացվել են դռները երկնքի և ունկնդիր ենք հրեշտակաբարբառ ավետիսին՝ «Ծնաւ Ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր»: Շնորհաշատ այս օրերին Աստվածկառույց հայոց Բեթղեհեմում, Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջև «սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք» փառաբանում ենք Նորածին Փրկչին և գոհություն ու փառք մատուցում Ամենախնամ Աստծուն, որ շնորհ է պարգևում մեր ժողովրդին ապրելու Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության բերկրանքն ու խնդությունը: «Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ. յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ»:

Բարձրյալի օրհնութեամբ անցնող տարին ազգային-եկեղեցական մեր կեանքում նշանավորվեց բազմաթիվ եկեղեցաշեն իրագործումներով, որոնք կոչված են ծառայելու Հայրենիքում և Սփյուռքում հոգևոր կյանքի վերազարթոնքին: Լիահույս ենք, որ փրկչական 2007 թվականին ևս հաջողությամբ պիտի շարունակվեն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շինությանն ու պայծառությանը միտված նախաձեռնությունները՝ մեր ժողովրդի կյանքից ներս հավելելով կենդանարար հավատը, հույսն ու սերը:

Սուրբ Ծննդյան հրաշազարդ խորհրդով նոր հույսերով ու սպասումներով լեցուն՝ Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Տերն Ամենակալ, հայցելով, որ հարատև խաղաղություն ու բարօրություն շնորհի Հայրենի մեր Երկրին, բոլոր ազգերին ու պետություններին և ամենակեցույց Իր շնորհներով առատապես օրհնի Իր Սուրբ Անվանը միշտ հավատարիմ մեր ժողովրդի զավակներին ի սփյուռս աշխարհի:

Հայրապետիս մաղթանքն է նաև, որ Բարձրյալն Աստված Իր օրհնության ներքո միշտ պայծառ ու բարգավաճ պահի Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը՝ պարգևելով Ձեզ քաջառողջ երկար գահակալություն, Միաբանության անդամներին մնայուն ձեռքբերումներով արգասավոր ծառայություն՝ ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և ի բարօրություն հավատավոր մեր ժողովրդի:

«Ծնաւ նոր Արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. Որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ»:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Մեզ ձեզ մեծ աւետիս

Եղբայրական սիրո ողջունիվ,
Աղոթարար

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ

Թիւ 272/06

Անթիլիաս, Ս. Ծնունդ 2007

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արքեպսկ. Մանուկեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմ

Սիրեցեա՛լ եղբայր ի Քրիստոս,

Տնաւն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ծննդեան ու Աստուածայայտնութեան հոգեպարար տօնին առիթով. եղբայրական ջերմ սիրով կ՚ողջունենք Ձերդ Ամենապատուութիւնը:

Արդարեւ, Ս. Ծնունդը հոգեւոր ու ազգային վերանորոգութեան առիթ է: Աստուծոյ Միածին Որդին մարդացաւ. որպէսզի մարդու կեանքը վերանորոգէ հոգեւոր եւ բարոյական արժէքներով ու մարդուն մէջ Աստուծոյ նմանութիւնը վերականգնելով:

Աստուածայայտնութեան տօնը. միաժամանակ մարտահրաւէր մըն է դառնալու Բեթղեհէմին, լսելու Բեթղեհէմի երկինքէն եկող ձայնը հովիւներուն. հովիւներու հաւատով ու յոյսով քալելու դէպի Բեթղեհէմ ու մանաւանդ Բեթղեհէմեան խորհուրդը վերանորոգ կեանքի թարգմանելու մեր անհատական թէ հաւաքական կեանքէն ներս:

Մեր ժողովուրդի կեանքի վերանորոգումը իր հոգեւոր ու ազգային տարածքներով. իր հայրենիքի ու Սփիւռքի թեւերով հրամայական անհրաժեշտութիւն է մեր եկեղեցւոյ համար: Արդ, մենք կոչուած ենք, որպէս հոգեւոր սպասաւորներ՝ Բեթղեհէմի պատգամին միշտ հաւատարիմ եղած մեր դարաւոր եկեղեցւոյ, վերանորոգ կեանքի պատգամը ու տեսիլքը տանելու մեր ժողովուրդի զաւակներուն, անոնց կեանքը պայծառակերպելով Աւետարանի ճշմարտութիւններով ու սկզբունքներով եւ մեր եկեղեցւոյ արժէքներով ու աւանդութիւններով:

Ամանորի եւ Աստուածայայտնութեան տօներուն առիթով ջերմօրէն կը շնորհաւորենք Ձեզ: Կ՚աղօթենք առ Աստուած. որ Բեթղեհէմի լոյսով պայծառացարդուի Ձերդ Ամենապատուութեան եկեղեցաշէն ու ազգանուէր ծառայութիւնը մեր Սուրբ եկեղեցւոյ ու հաւատացեալ ժողովուրդին:

Եղբայրական սիրոյ ողջունիս.

Աղօթակից,

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

digitised by A.R.A.R.@

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ
ՍՏԱՆՊՈՒԼ

ERMENİ
PATRİKLİĞİ
İSTANBUL

ARMENIAN
PATRIARCHATE
ISTANBUL

ΠΑΤΡΙΑΡΧΕΙΟΝ ΚΩΝΣΤΑΝΤΙΝΟΥΠΟΛΕΩΣ הפטריארכיה הארמנית באיסטנבול بطريركية استانبول وسائر بلاد الروم

4 Յունուար 2007
թիւ 8403

Նորին Ամենապատուութիւն
Տէր Թորգոմ Բ
Հայ Պատրիարք Երուսաղէմի
Ս. Քաղաք

Ամենապատիւ Տէր,

2006 թուին, մեր ընթացիկ կրօնա-բարոյական, ազգային-եկեղեցական, միջեկեղեցական, միջկրօնական ծառայութեանց եւ առաքելութեանց կողքին, Աթոռոյս կողմէ կազմակերպուեցան բազմաթիւ ձեռնարկներ, որոնք Թուրքիոյ հայութեան տարեգրութեանց մէջ դարձան յատկանշական երեւոյթներ:

Մեզի համար հոգեւոր մխիթարութիւն էր 2006 թուին Պատրիարքարանէս եւ Ս. Աստուածածին Աթոռանիստ Մայր Տաճարէս ներս ընդունիլ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Հռոմի Պապ՝ Բենեդիկտոս ԺԶ. Ս. Քահանայապետը եւ զանազան առիթներով Յունաց Բարթողոմէոս Ա. Ս. Պատրիարքը:

Փրկչական 2007 թուականի Աստուածայայտնութեան տօնի բարեբաստիկ առիթով, կը մաղթենք եւ կ'աղօթենք, որ Բարձրեալն Աստուած պարգեւէ Ձերդ Ամենապատուութեան քաջառողջ եւ երկար կեանք, բազմամեայ եւ արեւշատ գահակալութիւն:

Այսու գրիչ Ձերդ Ամենապատուութեան կը փոխանցենք նաեւ Պատրիարքական Աթոռոյս հոգեւորական դասուն, մեր համայնքային վարչութեանց եւ հաւատացեալ ժողովուրդի որդիական սիրոյն եւ ակնածանաց հաւաստիքը:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի



ՍԵՍՐՈՊ Բ. ՊԱՏՐԻԱՐՔ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՏԱՆՊՈՒԼԱՑ

digitised by A.R.A.R.@

Патриарх
Московский
и всея Руси

119034 Москва, Чистый пер. 5

**ЕГО БЛАЖЕНСТВУ,
БЛАЖЕННЕЙШЕМУ ТОРКОМУ II,
АРМЯНСКОМУ ПАТРИАРХУ ИЕРУСАЛИМА**

Ваше Блаженство!

Примите мои сердечные поздравления с праздником Рождества Господа нашего Иисуса Христа.

Своим пришествием на землю Спаситель обновил нашу природу и, как говорит святитель Григорий Богослов, «соединил естество Божеское с естеством человеческим». Ныне мы, исполняясь радости духовной, празднуем это величайшее событие и видим очами веры исполнение этой великой тайны.

От всей души желаю Вам мира, крепости сил и помощи от Рождающегося ныне Господа в Вашем высоком служении.

С любовью о Христе Родившемся

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ

Рождество Христово
2006/2007 г.
Москва

digitised by A.R.A.R.@